

ՊԱՏՈՒԱՍՏԵՑԷՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԿԵՂԾՄԱՇԿԻՆ ԴԷՄ

Կեղծմաշկը (diphthérie) մանուկները մահացնող ահաւոր հիւանդութիւններէն մէէն է և մայրերուն սարսափը:

Թէև չափահասներն ալ ենթակայ են այս հիւանդութեան, սակայն 20 տարեկանէն վեր, բաղդատաբար հազուադէպ է (15%): Նորածինները՝ մինչև վերցերորդ ամիսը շատ-քիչ կը վարակուին (7%): Ամենէն աւելի ենթակայ են 2-7 տարեկան մանուկները (65%):

Ինչպէս նման շատ մը հիւանդութիւններ, կեղծմաշկը ունի իր յատուկ միքրոպը — Պասիլ տը Լէօֆիլէր: Հետևաբար փոխանցիկ է և վարակիչ: Իր գործունէութեան գլխաւոր ըլջանն է՝ կոկորդը:

Մանուկ մը շփում կ'ունենայ հիւանդ կամ նոր ապաքինած ընկերակցի մը հետ. կամ կը գործածէ անոր պատկանող ժատիտը, գրիչը, գերքը, խաղալիքը ևլն: Կամ ծնողքն հիւանդին տունը կ'այցելեն ու տուն կը բերեն միքրոպը: Երբեմն ալ բժիշկը իր զաւակներուն կ'ընէ այս մահացու նուէրը կամ ինքն իսկ կը վարակուի:

Ինչ որ ալ ըլլայ, այս պայմաններուն մէջ գտնուող մանուկ մը կը վարակուի, եթէ ընդունակ է: Կան որ ընդունակ չեն հիւանդութիւնը առնելու, այսինքն թէ իրենց կազմը յաճախ, բնականօրէն կամ ստացական կերպով, պէտք եղած միջոցները ունի միքրոպին ոյժը «կոտրելու»:

Վարակումէն քանի մը օր (2-15) ետք, պզտիկը կը տիրի, կը գունատի, այլևս չի խաղար, ուժաթափ կ'ըլլայ: Քիչ յետոյ կոկորդը կը սկսի ցաւիլ, այդ պահուն հիւանդութիւնը արդէն բաւական առաջացած կ'ըլլայ:

Բնանալ տուէք բերանը և պիտի տեսնէք թէ նշիկներէն (պատէմնիվ) մին կամ երկուքը ծածկուած են ճերմակ նիւթով մը, տեսակ մը մաշկով (կեղծ-մաշկ) որ քանի մը ժամուան մէջ կը տարածուի ամէն կողմ, կը ծածկէ լեզուէկիը, միւս նշիկը, ամբողջ կոկորդը: Վզին աւշային կծիկները (պէզ) կ'ուռին: Կոկորդի կեղծ մաշկերը կը տարածուին դէպի վեր՝ քթի խոռոշները, դէպի վար՝ ձայնալարերը, խոչափողը և ցնցուղները, հետզհետէ կը խցեն չնչառութեան ճամբանները և վերջի ի վերջոյ մանուկը խեղդամահ կ'ըլլայ սարսափելի տանջանքներու մէջ: Այս է կեղծմաշկի այն ահաւոր բարդութիւնը զոր մեր մայրերը կը ճանչնան աֆլորինդդ — գուշպօղան անուան տակ:

Հիւանդը միւտ այս բարդութիւնով չի մեռնիր: Երբեմն հիւանդութիւնը այնքան արագ կ'ընթանայ, որ 3-4 օրուան մէջ մարմինը կը թունաւորէ և պզտիկը շանթահար կ'ընէ:

Բախտաւոր պարագաներու մէջ 8-10 օր կը տեէ, հիւանդը

կարծէնայ, բայց ապաքինումը երկար կը տես ու կրնան զանազան բարդութիւններ պատահիլ:

Ինչնարերաբար բուժգւմը հազուազէպ է: Կը յիշեմ թէ ժամանակին երբ մեր մայրերը ըսէին թէ «դրացիին տղան գուշպօզան է բռնուած է», այդ կը նշանակէր թէ փոքրիկը անխուսափելիօրէն մահուան դասապարտուած է:

Ճիշտ էր այս գեռ 20-25 տարի առաջ, երբ կեղծմաշկէ վարակիուած մանուկներուն հարիւրին 70-ը կը մեռնէր: Տօքթ. Ռու, Փարիզի Փասթէօրեան Հաստատութեան այժմու վարիչը, 1894-ին գտաւ կեղծմաշկէ շիճուկը, որու գործածութեան չնորհիւ մահերութիւն իջաւ 10%-ի: Այս համեմատութիւնն ալ կրնայ նուազիլ և նոյնիսկ անհետիլ, եթէ վարակուողները՝ հիւանդութեան սկզբին իսկ շիճուկով դարմանուին և մանաւանդ եթէ հիւանդութեան ենթականները պատուաստուին:

Շիճուկը ուրիշ բան չէ եթէ ոչ կեղծմաշկի դէմ պատուաստուած ձիու արեան հեղուկ մաօը, որ իր մէջ կը պարունակէ այնպիսի նիւթեր որոնք յաջողութեամբ կը հակազդեն հիւանդութեան միջրոպին և անոր թոյնին:

Կեղծմաշկէ բռնուած հիւանդ մը եթէ առաջին օրերուն իսկ շիճուկով դարմանուի, անպատճառ կը բռնժուի: Հակառակ պարագային յաճախ կը մեռնի:

Որպէսողի կարելի ըլլայ դարմանումը կանուխ սկսիլ, ծնողները պէտք է անհոգ չըսնուկին: Ամէն անգամ որ տղայ մը հիւանդանայ, նախ պէտք է կոկորդը քննել: Բժիշկը ամենափոքը: կասկածի մը պարագային, անմիջապէս, շիճուկ կը ներարկէ:

Մնողները պէտք չէ հակառակին այս ներարկումին: Աւելի լաւ է որ բժիշկը շիճուկ ներկարիէ բայց սխալած ըլլայ ախտանիաչութեան մէջ, քան թէ չներկարիէ, ոպասէ ու պատճառ ըլլայ հիւանդութեան ծանրաթանում:

Շիճուկը ոչ միայն բռնժիչ՝ այլև կանխարգիլիչ յատկութիւն ունի: Երբ տան մը մէջ տղայ մը հիւանդանայ, միւս փոքրիկները՝ շիճուկի ներարկումով կարելի է պաշտպանել հիւանդութեան դէմ, բայց միայն 15-25 օր: Աւելի երկար ատեն պաշտպանուելու համար պէտք է պատուաստուիլ, այնպէս ինչպէս ծաղկախտին դէմ:

Պատուաստը (anatoxine diptéritique) 1924-ին պատրաստեց Տօքթ. Ռամօն (Փարիզի Փասթէօրեան Հաստատութեան): Երեք ներարկում կ'ընեն, երկրորդը առաջինէն 3 շարաթ յետոյ և երրորդը՝ երկրորդէն 15 օր ետք: Ներարկումները որևէ անպատճութիւն չեն ներկայացներ, առ առաւելին թեթև կարմրութիւն մը և քիչ մը ցաւ ներարկումին տեղը:

Պատուաստի կանխարդելիչ՝ ազգեցութիւնը տարիներ կրնայ

առևել : Սակայն խոհեմութիւն է համաճարակի առեն կրկն պատուաստել :

Առանց բացառութեան պէտք է պատուաստել 2-10 տարեկան բոլոր մածուկները, որովհետև մեծ մասով ընդունակ են կեղծմաշկով վարակուելու : Իսկ չափահասներէն պէտք է պատուաստել միայն ընդունակները, զորս բժիշկները կրնան դատել մասնաւոր միջոցով եւ :

Ծնողներ, անհոգ մի գտնուիք, պատուաստել առէք ձեր զաւակները կեղծմաշկին դէմ :

Կեղծմաշկն ալ պէտք է անհետանայ ծագկախտին նման :

Բժ. 1. ԳՐԻԴՈՒԾԱՆ

ՑԱՀԱՍՏԵՆԴԸ ԵՒ ԻՐ ԱԻԵՐՆԵՐԸ *

III. - ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Զանազան ճենքը . — Աւելորդ չպիտի ըլլար հոս մի քանի բառով հասարակութեան ներկայացնել ճահճատենդէ վարակուած մարդուն մօտ հիւանդութեան սկզբին երևած նշանները :

Ճահճատենդը ամէն ժամանակ միենոյն ճեռով չի ներկայանար, բայց ընդհանրապէս, երեք գլխաւոր լրջաններով իր ներկայութիւնը կը զգացնէ : Ենթական նախ դող մը կ'ունենայ, կը մրսի, տժգոյն վիճակի մէջ վերմակներով ծածկուիլ կ'ուգէ, բայց որքան ալ խնամքով ծածկեն, հիւանդութիւնը իր առաջին լրջանը պիտի բոլորէ, յետոյ ջերմութեան լրջանը և ի վերջոյ առաստ քրաբինք . այս տեսակը տենդին ամենօրեայ ճեն է : Տենդը եռօրեայ կ'սուլի երբ որընդմէջ կը պատահի, չորեքօրեայ՝ երբ երեք օրը անգամ մը : Երբ ջերմութիւնը առանց դաշըրելու ամէն օր կը շարունակուի, միոյն առաւտոնները մի քիչ նուազած, այդ պարագային շարունակական տենդ անունը կ'առնէ : Երբեմն ճահճատենդը այնքան գօրաւոր կ'ըլլայ որ մի քանի ժամուան մէջ կը մեռցինք . այս գէշ տեսակ տենդին կ'ընկերանայ թմբրութիւն մը, իբր թէ հիւանդը թմբրեցուցիչ մը առած ըլլար : Գէշ տեսակ ճահճատենդերէն յիշենք՝ անօրինակ ջերմութեամբ տենդը, սառեցուցիչ տենդը, թանչքատենդը ևայլն :

Ճահճատենդը իր վերջին ճենին մէջ կը յանդի ախտազնութեան (cachexie) որու ընթացքին ենթակային մորթը կաւահողի գոյն մը կ'առնէ, անարիւնութիւնը իր ժայրաւորինին կը հանի և որը աստիճանաբար պատճառ կ'ըլլայ մարմնոյն գրեթէ ամէն գործարաններուն զանազան հիւանդութեանց :

Աւերմերը . — Ճահճատենդը աշխարհի չափ հին հիւանդութիւն մ'է . ան հինուց ի վեր ծածօթ էր մարդկութեան, ու յիշատակուած

*) Տես «Բուժանմիք» էջ 52 և 130